*Գերապայծառի և. Գերյարգելոյ Տեառն Մխիթարայ Աբբայի, Աստուածաբանութիւնեան Վարդապետի, և. Հօրդ մերում մեծաւ խոնարհութեամբ, և. բազմաւ կարօտիւ մատուցանեմ զորդիական ողջոյն, և. գնպատակութիւն։*

*. . . . յանկարծակի եհաս լուր թէ տաճիկք ելեալ ի Օրշօվայէն՝ սպառնան մտանել ի դրանսիլվանիայ, և առաթուր առնել զամենայն բնակիչս։ Յայնժամ յերկիւղէ և ի կարծեաց եկելոց՝ սկսան[1] զինչս իւրեանց Կեռլացիք մինն ի Գլուժ, միւսն ի Պիստրիցայ, և այլք յայլ ուրեք, իբր փախստականք։ Եւ այսու պատճառաւ մոռացան գրել առ Գերյարգելութիւնդ։... վերջապէս լուաք թէ յետս ընկրկեալ են կայսերական զօրքն զմահմետականս։ Բայց յետ ոչ բազմաց աւուրց մերձեցաւ ժանտամահն Կերլայի քաղաքին, և սկսան շուրջանակի մեռանել կարի սաստկաբար, մինչև վերջապէս եհաս ի Կեռլայ, և մեռան ի միում տան երկու տղայք մինն զկնի միւսոյն, և ոչ ոք մերձեցաւ առ նոսա, այլ թաղեցին ծնողքն զնոսա ի բակս իւրեանց, և դատաւորքն փակեցին զտունն զայն զամիս մի, որպէս զի փորձիցեն ա՞րդեօք ի ժանտամահէ իցեն մեռեալք թէ յայլմէ պատճառէ, և ևս որպէս զի մի լնանիցին այլք, եթէ գուցէ ի ժանտացաւէ իցեն տղայքն մեռեալք։ Եւ քանզի ասացին ծնողաց տղայոց դատաւորքն ոչ թաղել զնոսա ի տուընջեան այլ ի գիշերի, որպէս զի այլազգիքն մի իմանայցեն, և համբաւ չար զքաղաքէն հանիցեն։ Բայց քանզի ոչինչ է ի ծածուկ (ըստ Տեառն բանի) որ ոչ յայտնիցի, ուստի գիւղականք տեսանելով զնոսա լուսով ճրագի փորել զփոս ի պարտիզի՝ գնացին, արշաւեցին, թռեան և հասին առ շրջակայ այլազգի իշխանսն, և համբաւեցին, թէ այնքան սաստկաբար մեռանին հայք՝ մինչ զի ի տուընջեան ոչ կարեն ունել զժամանակ զամենայն մեռեալսն թաղելոյ, վասն այսորիկ նաև ի գիշերի թաղեն։ Եւ այսպէս ել վատ համբաւ զքաղաքէն, թէ արաթուր տապաստ անկեալ մեռանին։ Վասն որոյ եկեալ փակեցին զքաղաքն շուրջանակի, և ասացին հայոց չելանել ի քաղաքէն, զի ուր և գտանիցեն զնոսա հրացանով սպանցեն։ Եւ այսպէս աւելի քան զվեց շաբաթ ոչ ոք ել անտի, և ոչ ոք մտանէր անդ. մինչև վերջապէս իմացան զճշմարիտն, թէ ոչ ի ժանտացաւէ, այլ ի Ղաղիկէ մեռեալք էն տղայքն։ Եւ ես յայսմ ժամանակի բնակէի ի տան քեռ իմոյ, և յեկեղեցւոջ լսէի զխոստովանութիւն, ըստ խնդրոյ Տէր Մինասին աւագերէցին, մինչև փակեցաւ քաղաքն։ . . . վաճառականքն առուկապ եղեալ էն, և ոչ կարեն գնալ ուրեք...։*

*Նուաստագունեղ ծառայ*

*Ցամի Տեառն 1739* — *Հ. Թ. Յով[հ]աննիսեան Կ. ի Կ. Անդօնեան*

*Յունվարի 3 ի Կեռլայ*

## ԶԵ.

*Կը շարունակէ Հ. Միքայէլ իւր օրագրական լուրերը ժամանակակից պատերազմին և անոր ընթացքին շուրջ հետևեալ թուղթերուն մէջ։*

*Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ Աստուածաբանութեան Վարդապետի*

*. . . Ցաւուրս յայսոսիկ լուաք, թէ ի յէրուէլու նահանգն մերձ սիպինու, ժամանեալ են քանի մի Ռ տաճիկք. այն կողմն եղեալ գումանտանթէն փոքրիփէ լօգովիցն, լուեալ, ի մէջ առեալ են զտաճիկսն, 1500 չափ տապաստ արկեալ են, և զայլս փախստական արարեալ։ Նաև բազում գիւղօրէք ուլահաց ապստամբեալ ի կայսերէն, ի կողմն տաճկի*

1. Հոս բնագրին մէջ բայ մը կը պակսի. պէտք է յաւելուլ փոխադրել կամ տանել և այլն։